

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԻՊ, 21 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 19

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Անորոշութեան Մեջէն

Տ. ձ. Խ.

ԹՕԴՈՒԱԾՆԵՐ

Քրիստոնէութեան էն ԿՆՆՈՒՅ Հարցը

ԲՐՈՅ. Զ. Ա. ՊԵՋՃԵԱՆ

ՄԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒՄԻՆԸ

ՎԵՐ. Ե. ԲԱՍՈՒՆԻ

ԿՐՈՆԲ ԵՆ ԱԳՃԱՍԻՐՈՒՄԻՆ

ՊԱՏ. Թ. ԶԱԳՄԱԳՃԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱՆՈՐ ԿԵԱՆԲԸ

ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ՏԵՐ ՔԵԳԻ ԿՈՂԱՄԸ

ԿԻԼՊԵՐԹ Թ.

ԱՐՏԱՍՈՒՐ

ՎԵՐ. Ա. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

ԲԱՂԵՅ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՅԵԻԱՅԼ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՕՔԵՐ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԵՒ ԶԱՆԴ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

ՍՏԱՑԱՆՔ

Կը հրատարակուի ամիսը երկու ան-
գամ, օտարերկրացիներէն 150 ղրուշ
սուրի. Սուրիոյ համար, և մէկ ու կէս
տոլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐԻ ԿԸ ՆՈՒՐԵՆ

ԷՄՄԱՆՈՒԷԼ Հայ Աւետ. Եկեղեցին,
Հալէպ, 900 ղրուշ սուրի:

ԼԱԹԱՔԻՈՅ Հայ Աւետ. Եկեղեցին,
200 ղրուշ սուրի:

ԳԸՐԸԳԻԱՆԻ Հայ Աւետ. Եկեղեցին
150 ղրուշ սուրի:

ՊՍՏԱՆԻԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ, Հատոր
47, ՏԱՅՓԸՆԻ ԱՆԿՈՒՄԸ, Հատոր 48,
ՄԵՄԵՆԻ ՀՍԿԱՆԵՐԸ:

ԱՊԱԳԱՅ, քաղաքական եւ հասարա-
կական եռօրեայ թերթ, տարեկան բաժ-
նեզին Ֆրանսա և Սուրիա 60 ֆրանգ,
Ամերիկա 3 տոլար: Հասցէ. M. Varen-
thy, 28 Rue Serpente, Paris (6e)

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ ՄԵՏԱՅՈՒՇ, 1933,
Սրբազան Խորհուրդներով զարգարուն:
Դիմել՝ Gh. Der Ghazarian, c/o B. P.
303, Alep, Syrie.



PRESCRIBE

IODO-MALT

— QUINO-MALT

IDEAL TONICS

FOR ALL!



Իօօօ+Մալթ=Իօօմալթ.

Իօօմալթի գործածութիւնը զմայլելի
արդիւնք կ'ուտայ՝ թէ՛ իբրեւ կանխար-
գելիչ միջոց մը և թէ՛ իբրեւ բուժիչ,
անհամար հիւանդութեանց մէջ, որոնց
սկզբնաւորութիւնը հազիւ թէ հասկնալի
դարձած է:

Իօօմալթը սահմանաւած է բուժելու
ամէն տեսակ մարսողական անկանոնու-
թիւն, որ բաղմազան ձեւերով երեւան
կուգայ, յանգելով երբեմն հիւծախտի
այտուցաւոր թոքախտի, դալկահարու-
թեան, պնդեցականութեան և երբ անոնք

զանազան բարդութեանց, մանաւանդ՝ հե-
տեանքներն են թերի անդադու թեւան:

Քինօ+Մալթ=Քինօմալթ.

Քինօմալթը՝ անհրաժեշտ դարձան մըն
է, հետզհետէ յառաջացող նիւարու-
թեան, օր կրնայ հետեւանքն ըլլալ
որեւէ ծայրայեղութեան մը, կամ չարա-
չար աշխատանքի:

Քինօմալթը անփոխարինելի է մանա-
ւանդ՝ ուժաթափութեան և հիւծումի
պարագաներուն, ինչպէս նաեւ հիւան-
դութենէ մը վերջ, ապաքինման շրջա-
նին համար:

Իօօմալթը և Քինօմալթը արտոժանգամ ըլլալով, դիւրաւ կ'ընան առնիլ գո-
նոնք մանուկներ, տարեցներ, տիկիներ, և նոյն իսկ ամէնէն նրբաճաշակ
անձեր:

Չափահասներու համար.— Օրական երեք անգամ, մէյմէկ օպուրի պատ:
Մանուկներու համար.— Այս դեղաչափին կէսը:

Իօօմալթը և Քինօմալթը կը ծախուին բոլոր յայտնի դեղաբանիկներու մէջ:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 19

ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ՄԷՋԷՆ

Հայ Աւետ. Եկեղեցիի մէջ 1920էն ի վեր կը շարունակուին վերաշինութեան և վերականգնումի մեծ ճիգերը, որոնց արդիւնքները բարեբար եղած են ընդհանուր աւետարանական կեանքի մէջ: Սուրիոյ և Լիբանանի մէջ կազմակերպուած են 21 եկեղեցիներ, որոնք՝ բացի մէկէն՝ ունին իրենց հովիւները կամ քարոզիչները: Բացի երկուքէն բոլորն ալ օժտուած են իրենց սեպակական առաւել կամ նուազ բարձրութեամբ դպրոցներով: Գրեթէ բոլորն ալ ունին կիրակնօրեայ դպրոցներ, և մէկ մեծ մասը կազմակերպած է Զանից ընկերակցութիւններ: Այս շրջանին մէջ շինուած են երեք նոր գեղեցիկ եկեղեցական շէնքեր՝ Հալէպ, Դըրըզխան և Պէյրութ: Ներկայիս Գահիրէի, Տամասկոսի, Պէյրութի (քաղաքի), Հալէպի (քեմփի), Ալեքսանդրէթի եկեղեցիները ձեռնարկած են իրենց սեպակական եկեղեցական շէնքերը ունենալու, և թէպէտ իրենց ներկայ տրամադրելի գումարները այս շինութեանց բոլոր ծախքերուն չեն բաւեր, բայց յոյս ունին մէկ երկու տարուան մէջ իրենց ձեռնարկները չափով մը յաջողցնելու: Այս եկեղեցիները կազմած են Միութիւն մը, որ 1923 էն իվեր գրեթէ ամէն տարի կանոնաւոր կերպով ունեցած է իր ժողովները: Միութիւնս իր անդամակցութեան առնելով Գահիրէի Հայ Աւետ. Եկեղեցիի նախաքայլը առած եղաւ կազմելու Մերձաւոր Արեւելի Հայ Աւետ. Եկեղեցիներու միութիւնը, և փափագելի և յուսալի է որ Երուսաղէմի, Եմֆայի, Աղեքսանդրոյ եւ

Կիպրոսի Հայ Աւետ. Եկեղեցիներն ալ անոր անդամակցին: Անտիոքի, Ազազի, Տրիպոլիսի եւ ուրիշ տեղերու փոքրաթիւ աւետարանական ժողովուրդներու հոգեւոր պէտքերը գոհացնելու համար առաւել կամ նուազ կանոնաւորութեամբ այլեայլ միջոցներ գործածուած են, եւ տակաւին կը գործածուին: Այս շրջանին միջոցին աւետարանական եկեղեցիի գիտակցութիւնը աւելցած է ժողովուրդին մէջ, որ այսօր անցեալի մէջ եղածէն աւելի եռանդ, զոհողութեան ոգի, և չահագրգռութիւն ցոյց կուտայ իր կրօնական և եկեղեցական գործունէութեանց մէջ:

Պէտք է նաեւ իբր ուրախաբերիք և բարեպատեհ իրականութիւն մը աւելցնել Պէյրութի մէջ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանին հաստատումը, որ միացումն է Երիցական Պորտի կառավարած նախկին Կրօնական Գործիչներու Դպրոցին և Ժողովական Պորտի կառավարած Աթէնքի Կրօնական Վարժարանին: Հաստատութիւնս նոր և ազգու գործօն մը պիտի ըլլայ Մերձաւոր Արեւելքի ընդհանուր կրօնական կեանքին մէջ, և մասնաւորապէս Հայ Աւետ. կեանքին մէջ՝ իր ուսուցչական զօրաւոր կազմովն ու աշակերտութեամբը, և մանաւանդ ան պիտի ըլլայ կապակցութեան շղթայ մը երկրամասիս երկու մեծագոյն աւետարանական զանգուածներուն՝ Հայ Աւետ. Եկեղեցիի և արաբախօս Երիցական Եկեղեցիի՝ միջեւ, զօրացնելով քրիստոնէական գործակցութեան և եղբայրակցութեան ոգին:

անոնց մէջ՝

Եթէ կայ խնդիր մը որ ծանր ճնշել կը թուի եկեղեցիներուն և անոնց վարիչներուն վրայ եկեղեցիներու և Միութեան պիւտճէն աւելի հաստատ հիմերու վրայ դնելու հոգն է: Բայց նկատի առնելով տնտեսական տագնապի սաստկագոյն շարժանին եկեղեցիներու մէջ տեսնուած հաւատքը, կատարուած զոհողութիւնը եւ ուրիշ պարագաները մենք անոնցմէ չենք որ անհարթելի կրնան նկատել մեր կրօնական գործունէութեան դէմ կանգնած այս խոչնդոտը, և նոյնիսկ կը հաւատանք թէ անիկա միջոց մը կրնայ ըլլալ նոր թափով մը աւելի ազդու և շինիչ գործունէութեան: Բայց մէկ պայմանով. եւ ի՞նչ է այդ:

Վերը մի քանի գիծերով պատկերացնել փորձեցինք Հայ Աւետարանականութեան քաջալերական երեւոյթները, որոնք, սակայն, առանձինն պէտք եղած համոզումը չեն ներշնչեր արգարացնելու և երաշխաւորելու մեր ներկայ եւ ապագայ զոյութիւնը: Ինչո՞ւ այս բոլոր կազմակերպական մեքենականութիւնը, գոր-

ծունէութիւնը, նիւթական և բարոյական զոհողութիւնները: Այս հարցումին պատասխանը բախտորոշ հանգամանք մ'ունի: Եթէ այս բոլորը կ'ըլլան միայն համայնքի անջատ զոյութիւն մը պահելու համար, զուրկ ուէ մեծ կոչումի մը գիտակցութիւնէն, անիմաստ եւ անարժէք պիտի նկատենք մեր զոյութիւնը պահելու բոլոր ճիգերը: Մենք կը հաւատանք թէ աւետարանական շարժումը ծնունդ առած եւ զարգացած է բարձր կոչումի մը գիտակցութիւնէն մղուած: Եւ թէ ներկայիս ան շատ բան կորսնցուցած է այդ գիտակցութիւնէն: Եւ ահա այս պարագան է որ անորոշութեան մթնոլորտ մը ստեղծած է Հայ Աւետարանական շրջանակներու մէջ: Ներկայ Աւետարանական եկեղեցին պիտի վերագիտակցի իր կոչումին, և ապա պէտք է գծէ որոշ ուղեգիծ մը առաջնորդուելու դէպի այդ նպատակակէտը, աւելի քան երբեք կազմակերպեալ ջանքերով իրականացնելու իր իտէալը: Յաջորդել կ'ուզենք անդրադառնալ այս կէտերուն:

Տ. Ճ. Խ.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ Է՛Ն ԿՆՃՌՈՅ ՀԱՐՅԸ

Այս մեծ հարցին տրուած պատասխանները բազմաթիւ են, և մարդուն, երկրիս և զիտուած տեսակէտին համեմատ ալ՝ իրարմէ շատ տարբեր: Ասոնցմէ ժամանց յիշենք:

Ուսանց կարծիքին համեմատ քրիստոնէական աշխարհին ամէնէն կարեւոր հարցը թա է թէ եկեղեցին հին աւանդութիւններու էսպէս հաւատարիմ պիտի մնայ, թէ ոչ կարգ մը կարեւոր կէտերու մէջ նորութիւններ պիտի ընդունի: Աւանպապահութիւն թէ յառաջգիտական քրիստոնէութիւն, ահա այս է է՛ն զժողով հարցը: Բրիտանիան

բու մեծամասնութիւնը, — Հոովմէական կաթոլիկ եկեղեցին, Յոյն Օրթոտոքս և Արեւելեան Հին Եկեղեցիներ — աւանդապահութեան կուսակից են, և սակայն իրենց զիրքերը պահելու համար արտասովոր ջանքեր ընելու հարկադրանքին տակ կը գտնուին:

Ուրիշներու գաղափարին համեմատ ամէնէն կարեւոր և զժողով խնդիրն է գիտութեան և քրիստոնէութեան իրարու հետ համաձայնութիւնը: Շատ քիչ կարծիքին համեմատ գիտութիւնն ու կրօնքը, բանականութիւնն ու հաւատքը յաճախ իրարու անհաշտ են: Գի-

տական կրթութիւնը հիմէն կը խախտէ շատ մը կրօնական համոզումները: Այս գիտական մեծ յառաջդիմութեան դուրսն մէջ շատ դժուար կ'ըլլայ աւանդական կարգ մը հին կրօնական հաւատալիքներու խղճամիտ կերպով հաւատարիմ մնալ: Ի՞նչ է այդ գժուարութենէ փրկուելու ճամբան:

Այս վերջին յիշուածին իբր բնական մէկ արդիւնքը՝ շատ հաւատալիքալիցի-րու համար ամէնէն խրթին հարցը սա է թէ ի՞նչ գաղափար պէտք է ունենան Ս. Գիրքի մասին: Պէ՞տք է Գիրքը ծայրէ ծայր առաքելութիւն ներշնչու-լնդունիլ, թէ օչ անոր մէջ արդ չափով մարդկային տարրին ալ գոյութիւնը ճանչնալ, գիտական և պատմական խազարկութեանց թելադրութեան հա-մեմատ: Եթէ մարդկային տարր մը կայ, ի՞նչ է անոր չափը, և այս ինչպէ՞ս պիտի ազդէ Ս. Գիրքի Աստուածային հեղինակութեան: Ահա ամէնէն կեն-սական և դժուար խնդիր մը:

Շատ մը մարդոց կարծիքին համե-մատ ալ քրիստոնէական աշխարհին մէջ է՛ն կարեւոր և է՛ն դժուար: Եւ ի՞նչ հարցը Յիսուս է: «Դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ»: Երեսօր անձը, ծառայութիւնը, Հօրը հետ օւնեցած յա-րաքերութիւնը, կեանքը, վարդապե-տութիւնը, մահը, յարութիւնը և այլն այսօր կը կապուին մեծագոյն խնդիրը:

Կարգ մը գիտուններ և փիլիսոփա-ներ քայլ մ'առ յառաջանալով կը պըն-դեն թէ կրօնական աշխարհի մէջ մեծա-գոյն հարցը Աստուած է: Աստուծոյ լու-սափառ անձը, անձնական ստորոգելիք-ները, ափսոսելի հետ յարաբերութիւ-նը, անողծագործութեան մէջ բաժինը, Յիսուսի հետ յարաբերութիւնը, արա-բածներու մանաւանդ մարդու հանդէպ դիրքը, գործունէութիւնը և այլն, միւս բոլոր խնդիրներէն բանալին կը կապ-ուին: Ամէնէն աւելի դժուարութեամբ

լուծելի հարցն ալ այս է:

Ահա պատասխաններէն ունեց, որ տարբեր պատկարագրէ քրիստոնեանե-րու կողմէ և տարբեր հայեցակէտերու համեմատ կը արտին յօդուածիս օկի-գը առաջադրուած հարցումին: Վստահ ենք թէ նոյն և աւելի չափով կարեւոր ուրիշ շատ մը պատասխաններ կրնան տրուիլ: Նպատակ չունինք ասոնցմով պարզիլ, այլ կ'ուզենք ասոնցմէ մէկը շեշտել:

Շատերու հետ մենք ալ կը կարծենք թէ այսօր՝ օտ տնտեսական, ընկերա-յին, քաղաքական մեծ ազդեցիկ շըր-ջանին՝ քրիստոնէական խիղճը ամէնէն աւելի պարզեցնողը բարոյական խնդիր մըն է, Երեսօր բարոյական վարդա-պետութիւնները դարձս ոգիին և ան-հրաժեշտութեանց հետ համաձայնեցը-նելու խնդիրն է, Երեսօր բարոյական վարդապետութիւնները՝ «խաբհի հետ բոլոր քրիստոնեաներու ընդունած և հետեւած կարգ մը սկզբունքներու հետ հաշտեցնելու խնդիրն է: Ճշմարիտ քրիստոնեան կ'ուզէ կատարելապէս հաւատարիմ մնալ Դիւստոսի: Ներկայ դարուս մէջ կատարեալ հաւատարմու-թիւն կարելի՞ է, բանական է, փափա-կելի՞ է, և թէ ի՞նչ կերպով. ահա ամէ-նէն դժուար գործնական հարցը. բացա-տրինք:

«Վաղուսն համար հոգ մի՛ ընէք», «մի՛ վո՛ր պահակ բռնէ քեզ և մղոն մը ճամ-բայ քէն, պէտ անոր հետ երկօ», «Եթէ մէկը ապտակ մը զարնէ աջ ծնօտիդ, դարձուր անոր միւսն ալ», «Ջարին հա-կառակ մի՛ կենար», «Ուզողին տուր» ըսաւ Երեսօր: Ասոնք կարելի՞ են, բա-նական են, օգտակար են: Եթէ ամէն ուզողին տաւ քեզի ի՞նչ կը մնայ: Վաղ-ուսն համար եթէ հոգ չես ընէր, քու և ընտանիքիդ ապագան ի՞նչ կ'ըլլայ: Կե-դեքողին, անիրաւի դէմ եթէ լինյալի-քըդ չես պաշտպաներ ի՞նչ արդիւնք

յառաջ կազմայ։ Քանի աշխարհ լեցուն է կողոպտիչ, կեղծքիչ, անիրաւ, ծոյլ, անբարոյական, տգէտ և կոռւակաւմարդերով, դուն ինչպէ՞ս կրնաս գոյութիւնըդ պահել Յիսուսի պատուէրին ամէն պարագայի տակ կատարելապէս հնազանդելով։ Քու կեանքիդ, պատիւիդ եւ ինչքիդ պաշտպանութեան համար ի՞նչ երաշխիք կ'ունենաս։ Այս Յիսուսի առաջադրած սկզբունքները բարձրագոյն սկզբունքներն էին։ Անտարակոյտ Անմեղի ներկայացուց կարելի բարձրագոյն գաղափարականը, և Յիսուս ապրեցաւ ճիշդ ինչպէ՞ս որ քարոզեց։ Բայց ասիկա մարդոց համար՝ մանաւանդ ներկայ դարու մէջ կարելի՞ է։ Ասկէ 60—70 տարիներ առաջ Հալէպ կ'ապրէր Ճապրա Անթաքի տնուն սուրբ մարդ մը, որ ներկայ ծանօթ Անթաքի բնտանիքին կը պատկանէր։ Ծիշդ Յիսուսի պատուէրին համաձայն ապրիլ ջանաց. ուզողին տուաւ, վաղուան մասին հոգ չըրաւ, իր իրաւունքը չփնտեց։ Անոր վախճանը ի՞նչ հղաւ, թշուառութիւն, աշխարհիս ըմբռնումով խեղճութիւն։ Երբեք չենք դատապատիր այդ բարի և անխարդախ անձը։ Բայց այսօր անոր պէս ապրիլ ուզող քանի՞ քրիստոնեայ կրնաս գտնել։

Արդի քաղաքակրթութիւնը, մանաւանդ տնտեսական և քաղաքական մարպերու մէջ, մրցակցութեան և անձնական շահերու հիմերուն վրայ հաստատուած է։ Ենախ իմ անձսի սկզբունքը կ'իշխէ անհատական և հաւաքական կեանքի մէջ։ «Թիթէ ես եղբօրս պահապանն եմ», ահա ստուար մեծամասնութեան ապրած ընթացքը։ «Ընդհանուրին շահը» ոսկ չուրթերու վրայ յեղեղուած բացատրութիւն մըն է, փոխանակ կեանքի մէջ ապրուած սկզբունք մ'ըլլալու։ Քրիստոնեաներ ապրելու և յառաջդիմելու համար ստիպուած են այս կեանքի պայքարին մէջ մտնելու։ Ամէն քրիստոնեայի համար

ամէնէն կարեւոր հարցը սա է թէ այս կեանքի պայքարին մէջ ինչպիսի՞ բարոյական ընթացք մը պիտի հետեւի։ Աշխարհի ընթացքի յայտնի է, այսօր յաջող ըլլալ, հարստանալ, անձնական փափագներու և փառասիրութիւններու գոհացում տալ, բայց միջոցներու ընտրութեան մէջ շատ ալ բարակը չփնտռել, աշխարհի ըրածը ընել, անցած ճամբէն տնցնել, միայն արդիւնքը նկատի ունենալ և միջոցներու համար շատ ալ բծախնդիր չըլլալ։ Հարստութիւն և յաջողութիւն ձեռք ձգելու մէջ քրիստոնեայի համար ալ ասիկա մեծ փորձութիւն մը և վտանգ մըն է։ Շատ անգամ ինքն ալ կը խորհի թէ աշխարհի գացած ճամբէն եթէ ինք չ'երթար պայքարի մէջ կը պարտուի։ Ի՞նչ ընէ. անպատճառ կ'ուզէ Քրիստոսի և Անոր ուսուցումներուն հաւատարիմ մնալ։ Անոր համար ամէնէն կնճոռտ խնդիրը սա է թէ միշտ կրնա՞յ Յիսուսի հաւատարիմ մնալ, մինչ ինք՝ պայքարի մրցակցութեան և անձնական շահի վրայ հիմնուած այս ընկերային կազմակերպութեան մէջ իր և իրեններուն գոյութիւնն ու շահերը պաշտպանել կը ճգնի։ Շատ մը անկեղծ քրիստոնեաներ կան ուրոնց խիղճերը չեն հանգուրժեր Յիսուսի խօսքերը չարափութութեամբ, մեկնութեամբ, թերեւս կեղծիքով և բառերու ղէզլին տակ խեղդելու և նստմացնելու։ Ասոնք իրենց արժանապատուութեան զգացումին չեն պատշաճեցներ Յիսուսի բարոյական սկզբունքները յարգել երբ իրենց գործին զայ, եւ չյարգել երբ իրենց գործին չզայ։ Կարգ մը հոգեւոր գործիչներու—որոնք իրենց խօսածներուն յաճախ չեն հաւատար և եթէ նոյնիսկ հաւատան զանոնք չեն ապրիր— կարգ մը սովորական մեկնութիւնները և կաղապարատիպ բացատրութիւնները, յաճախ այդ հաւատացեալները չեն զոհացներ։ Ուրեմն ի՞նչ ընեն։ Քրիստոսի թէ ժամանակի պայմաններուն (Շարունակութիւնը տես էջ 355)

ՄԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

ԻՐԵՆՑ ԱՋԳԻՆ ՀԱՆԴԵՊ

«Նոր սերունդ» ըսելով դաստիարակուած երիտասարդութիւնը կը հասկընամ, որովհետեւ դաստիարակութեան գրեթէ պարտաւորիչ դաժնած այս դարու մէջ քիչ թէ շատ դպրոց չտեսած մէկը չի կրնար իր ժողովուրդին օգտակար ըլլալ, իսկ եթէ մէկը առաջնորդի դեր կատարել կ'ուզէ, պէտք է որ տարրականէն վեր դաստիարակութիւն մը վայելած ըլլայ: Ասիկա այնչափ ճշմարիտ է իգական սեռէ որչափ ալական սեռէ երիտասարդներուն համար: Եւ ճիշդ ասոր համար հաստատուած են գուէնիւր և բարձրագոյն վարժարաններ, որոնց մէկուն ալ ամալիւրջին հանդէսը կատարելու համար հոս հաւաքուած են քո-

րաստիարակութիւնը կեանքի մեծագոյն բարիքներէն մէկն է, և յատկապէս կիներու դաստիարակութիւնը ժողովուրդի մը զարգացման յատկանշներէն մէկն է: Մեր Հայ ազգին մասին ալ ճշմարիտ է այս: Թէն հին դարերուն, այդ ժամանակներու ընդհանուր ըմբռնումին համեմատ՝ ինչպէս ուրիշ ազգերու նոյնպէս և Հայոց մէջ մեծաւ մասամբ արական սեռի յատուկ էր դաստիարակութիւնը, սակայն արդէն Ե. դարուն Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց մէջ կը հանգիւղին քառերուն, որոնց մասին Եղիշէ կ'ըսէ թէ «Սաղմոսներն էին մշտնջենաւոր մրմունջներ իրենց բերնին մէջ, և կատարեալ մխիթարութիւնք՝ մարգարէներուն ընթեր-

ցուածները»:

Ասոնցմէ մէկն էր Վարդանի Շաշանիկ, Մեծն Վարդանի հայրանման դուստրը, իսկ աւելի նշանաւոր մըն է Զըւիկ, Մեծն Վահան Մամիկոնեանի մայրը, ուսեալ տիկին մը և վարժ ուսուցչուհի: Եթէ ժամանակ ունենայինք, կ'արժէր մանրամասնօրէն պատմել ասոնց վրայ, ինչպէս նաև Ստեփանոս Սիւնեցւոյ քոջ Սահակաղաթաի վրայ, բանաստեղծ ու հրաժշտագէտ միայնակեցուհի, որ վարագոյրի ետեւէն սրբազան երդեցողութեան դասեր կուտար արեղաներուն: Կ'արժէր պատմել Աշոտ Ողորմածի տիկնոջ խորհրդանոյշ թագուհւոյ վրայ, որ Հայաստանի ամէնէն հուշակաւոր երկու ուսումնական-լիւրուն հիմնարկուն եղաւ և գիտութեանց, գրականութեան ու գեղարուեստից պաշտպան, անզուգական կին մը զարգացեալ, կ'արժէր խօսիլ Արծրունեաց Մլքէ թագուհւոյ վրայ, որուն իր անձնական գործածութեան համար զըրել ու գեղազարդել տուած Աւետարանը մեզի հասած հայերէն ձեռագիրներուն ամենահիններէն ըլլալէ զատ, ճշմարիտ գեղարուեստի գործ եզոզ իր գունաւոր նկարներով ալ ամենաթանկագին գոհար մըն է: Կ'արժէր վերջապէս պատմել Կիլիկիոյ Զապէլ թագուհւոյ վրայ, որ գահուն վրայ բազմիլէն և Հիթումի հետ ամուսնանալէ ետքն ալ տարեկան շարունակեց իր երիտաւար դամուսնոյն հետ ուսումնաստանալ դարուն բազմահմուտ վարդապետներէն: Բայց զանց կ'ընենք ասոնք, քանզի տարբեր առիթներով արդէն բաւական ընդարձակ խօսուած է ասոնց և

Ծ. Խմբ. գրութիւնս կատարուած է Ամերիկեան Աղջկանց Բարձրագոյն Վարժարանին հանդեսին մեջ, Հայիս, 1932, Յուլիս:

գիւ թւրիշ շատ մը ուսեալ պատմական հայ կրօնական մասին: Ճակատին ժԸ. դարուն ալ, Կ. Պոլիս կ'ապրէին քանի մը զարգացեալ հայ կրօնի, որոնցմէ երկուքը ձեռագիրներ ընդօրինակելով ու գեղադրելով՝ թէ՛ իրենց ապրուստը կը հանէին և թէ՛ Հայ գրին ու գեղարուեստին կը ծառայէին:

Այսուամենայնիւ, անուրանալի է թէ երբ ժԹ. դարու արշալոյսը կը ծագէր, խոր տգիտութեան մէջ կը տուայտէր մանաւանդ գաւառներու մեր իրական տեղը: Ուստի անգնահատելի բարիք մը եղած է Ամերիկեան դատարարակութիւնը որ միսիոնարներուն ձեռքով բերուած է մեզի: Անցեալ տարի Կ. Պոլիս տեսեցաւ հոն Ամերիկեան Պորտի գործի սկսիլուն հարիւրամեակը: Թիւրքիա հաստատուող Ամերիկացիներուն ամենէն առաջին ու կարեւոր ջանքերէն մէկը եղած է դպրոցներ բանալ աղջիկներու համար, որոնց առաջինն եղաւ Զմիւռնիոյ մէջ 1840 ին և ներկորդը՝ Կ. Պոլսոյ մէջ 1843 ին. և իրողութիւնը սա է որ անկէ ի վեր իբարու ետեւէն բացուած այդ դպրոցներէն ալ ամենէն շատ օգտուողը հայ աղջիկներն են եղած: Այսպէս շատ մեծ եղած է Ամերիկացեաց գիրը մեր իրական տեղի դաստիարակութեան մէջ՝ թէ՛ Կ. Պոլիս և թէ՛ մանաւանդ գաւառները: Ասիկա շատ կարեւոր հետեանքներ ալ ունեցած է: Մէկը սա է որ Հայ եկեղեցին ալ շատ կանուխէն աղջիկներու դաստիարակութեան հոգ տանիլ սկըսաւ: Իրական տեղի դաստիարակութեան արուած այս կարեւորութեան շօշափելի մէկ արդիւնքն ըլլալով ուստահայերէն առաջ և շատ աւելի թիւով գրագիտահիներ ելած են Թրքահայոց ու մանաւանդ Պոլսահայոց մէջէն:

Բայց ուղղակի մեր Աւետ. համայնքին վերաբերութեամբ կարեւոր հետեանքը սա եղած է որ մեր տարրական

երկսեռ դպրոցներուն մէջ ուսուցչական պաշտօնը տիրապէն ի վեր գրեթէ բոլորովին վարժուհիներուն սեպականուած է, ինչ որ աւելի խնայողական կարգադրութիւն մըն էր՝ մեր ընդհանրապէս ոչ-ուսեւոր ժողովուրդին համար: Աղջիկներու համար բացուած Ամերիկեան վարժարաններուն գլխաւոր մէկ նպատակը եղած է ուրեմն ուսուցչահիներ պատրաստել մեր տարրական կարգերուն և գիւղական դպրոցներուն: Իսկ այս յարաբերութիւնը կրկնակի փոխադարձ ազդեցութիւն ունեցած է՝ թէ՛ տարրական դասընթացքի և թէ՛ բարձրագոյն վարժարաններու ուսման ծրարներին վրայ: Այդ վարժարաններու ծրագրին մէջ ամենէն աչքի զարնող մէկ յատկանիշը եղած է հեն ճեղական, խօսակցական լեզուին (vernacular) ուսման տրուած լայն տեղը և, մանաւանդ սա որ, մինչև իսկ դասագիրքը Անգլիերէն եղած պարագային, դասախօսութիւնը օչ թէ օտար, այլ բնիկ ժողովուրդային լեզուով կ'ըլլար, զօլէհներու և սեմիներիներու ամենաբարձր կարգերուն միջանի դասերը երբեմն բացառութիւն կազմելով: Եւ այս պատճառաւ ալ սոյն կրթական հաստատութիւններու մէջ շատ գերակշիռ թիւով տեղացի, մանաւանդ հայ, ժառանգիչներ և փրփէսորներ գործածուած են քան ուրիշ օտար վարժարաններու մէջ: Այսպէս մեր Հայ-Աւետ. համայնքին մէջ դաստիարակութեան իրն է օտար ծագում ունենալնուն հակառակ, բնիկացած էր ան. դասաւանդութեան լեզուն հայերէն էր հայախօս գաւառներու մէջ, իսկ թրքախօս գաւառներու մէջ՝ թրքերէն, թէև վերջիններու մէջ ալ հայերէն լեզուի դասը կար:

Հետեւաբար, մինչև անգամ թրքախօս գաւառներուն մէջ շեշտուած էր մայրենի լեզուին կարեւորութիւնը հիմնական դաստիարակութեան համար:

Մենք, նշանաւոր մանկավարժ Պարթիկեան, համոզուած ենք որ դաստիարակութիւն մը այնչափ խորարմատ է յաջող կ'ըլլայ որչափ կարելի ըլլայ զայն մայրենի լեզուին միջոցաւ հաղորդել մանուկին։ Ասոր համար ալ թրքախօս գաւառներու բողոքական համայնքները, ուսման ծրագրին մէջ հայերէն լեզուին հետգնեցնելու աւելի լայն տեղ տալով հանգերձ, մինչեւ վերջ յամառեցան տարրական կարգերուն դասաւանդութիւնը մանուկին աւելի հասկնալի եղող թրքերէն լեզուով ընելու։ Բայց և այնպէս, երթալով աւելի թափ առնող շարժում մըն էր, մանաւանդ Օսմ. սահմանադրութեան վերահաստատութենէն ետքի տարիներուն մէջ, թրքախօս Հայերուն՝ դպրոցի միջոցաւ հայախօս գաւառաւոր ճիւղը։ Ասոր հոգեբանական խորունկ նշանակութիւնը կ'արժէ յատուկ մտածութեան նիւթ ընել։

Այս քիչ մը երկար պատմական տեսութիւնն ըրինք, որովհետեւ, ինչպէս ըսուած է, «Անցեալը ապագային ուսուցիչն է», և մենք կարեւոր դասեր ունինք սորվելու մօտաւոր անցեալի փորձառութիւններէն։ Այդ կրթական հաստատութիւններէն երկու կամ երեքը հիմա հոս փոխադրուած, տարբեր պարագաներու տակ թէն, բայց կը հաւատանք թէ առաջուան լայնամիտ և անձնուէր ոգիով, կը շարունակեն իրենց ծառայութիւնը ոչ միայն մեր ժողովուրդի մնացորդին, հապա աւելի լայն աւազմատեսակ շրջանակի մ'ալ։

Հիմա Սիւրիոյ ասպնջական հողին վրայ, արաբախօս միջավայր մը փոխադրուած, մեր աւելի քան հարիւր հազար հայութեան համար նոր և կարեւոր ուղծուար խնդիրներ կան դաստիարակութեան մարզին մէջ լուծելու։ Ոստիկանիս մասնաւորելով գրեթէ տասը հազար հոգի համառողջ Հայ-Աւետ. համայնքին, մեր առջեւ կը սցաւին երեք

կարգ պարտականութիւններ. (ա) իբրեւ հայ ազգին մասը պարտականութիւնիս մեր ցեղակիցներուն հանդէպ. (բ) իբրեւ կրօնական մասնաւոր համայնք մեր հոգեւոր պարտականութիւնը. (գ) իբրեւ Սիւրիոյ քաղաքացիներ Հայոց պարտականութիւնն այս երկրին ու անոր բնիկ ժողովուրդին հանդէպ։ Խնչպէս պիտի կրնանք այս երեք տեսակէտները հաշտեցնել ու միասին յառաջ տանիլ։

Նախ և առաջ ըսեմ որ ըստ իմ խոնարհ կարծեացս, իբրեւ Աւետարանական եկեղեցի մեր հոգեւոր կոչումին հաւատարիմ մնալին աւելի պիտի օգնէ միւս երկու տեսակէտներն ալ հաշտեցնելու, առանց իբրեք առաջինին փնասելու։ Երկրորդ, չենք կրնար անշուշտ մոռնալ թէ Հայ-Բողոքականները ալ մաս կը կազմենք աւելի մեծ մարմինի մը, Հայ ազգին։ Մեր նախակրթական ու կրթական. դպրոցներուն մէջ ու մինչեւ անգամ եկեղեցական պաշտամունքներուն մէջ, ծագումով թրքախօս Հայերու ալ դէպի հայերէն լեզուն վերաբերմունքը հիմնական փոփոխութեան ենթարկուած է ներկայիս։ Ստիպուած ալ էինք այս փոփոխութիւնը կատարելու։ Ուստի մեր զարգացեալ և առաջնորդի դեր կատարելու կոչուած երկտեսարդութիւնը հարկաւ չի կրնար անհոգ գտնուիլ իր մայրենի լեզուին հանդէպ, ընդհակառակն պարտական է զայն հիմնովին սորվիլ և ուղիղ գործածել. պարտաւոր է անոր գերականութիւնը սիրտել, որպէսզի կառնայ իր ժողովուրդին սրտին ու հոգիին խօսիլ։ Հետեւաբար, լաւ կ'ընեն եթէ մեր դաստիարակեալ երիտասարդները խորունկ ուսումնասիրութեան նիւթ դարձնեն աւհարցումը.—կ'արժէ Հայ ապրիլ, և ինչէ հայ մշակոյթին արժէքն ու կարեւորութիւնը, կարելի է զայն պահպանել ու զարգացնել ներ-

կայ նոր միջավայրին մէջ և ի՞նչպէս, անկէ ի՞նչ օգուտներ կրնան ծագիլ այս երկրին համար, և այլն: Բայց միւս կողմէն, աւելորդ կը համարեմ մեր երիտասարդութեան յորդոր կարգաւ իրենց ազգն ու ժողովուրդը սիրելու, որովհետեւ անոնք այս մասին ըստ բաւական զիտակից են արդէն: Միայն իրենց ազգին հանդէպ պարտականութեան մէկ կողմը կայ զոր կ'արժէր ընդգծիլ և որ զժբախտաբար յաճախ կ'անտեսուի: Ըսել կ'ուզեմ թէ՝ նոյն իսկ իրենց ազգին սիրոյն համար պէտք է որ մերիններն իրենց զգացմանց արտայայտու-

թիւնը չափաւորել գիտնան: Մանաւանդ դաստիարակեալ անհատներէն, կը ակնկալուի արժանաւայել ողջամտութիւն և պարագաներու իրատեսութիւն: Ասկէ զատ, կ'արժէ շեշտել՝ շատ յեղյեղուած, թէեւ օտակայն գործնականապէս զանց առնուող սա պարտականութիւններն ալ, այսինքն զիրար սիրել ճշմարիտ սիրով ու միաբան ապրիլ, նաեւ նախանձախնդիր ըլլալ մեր բարոյակաւորն, մանաւանդ ընտանեկան կեանքի մաքրութեան, որ մեր գոյութեան նախապայմաններն են: (Շար.) Ե. ՔԱՍՈՒՆԻ

ԿՐՕՆՔ ԵՒ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Յետ-պատերազմեայ հայնսրսերունդը՝ առանց յարանուանական խտրութեան՝ ազգային գիտակցութեան զօրաւոր զգացումը կը կրէ: Շատեր յափշտակուած են կուսակցական՝ ազատատենջ՝ երազներով: Շատերու կողմէն Հայ Բողոքականութիւնը թշուազաւոր՝ ու նոյն իսկ ազգութեանց կը նկատուի այս կամ այն պատճառով:

Կրօնքը և կիզեցին ազգին փաստաբեր նկատողներ ալ անպակաս են: «Ուրիժ» մէկդի դնենք կրօնքը և զԱստուած՝ ու ազգը պահպանելու աշխատինք՝ կ'ըսեն ասոնք:

Մեծագոյն ազգառէրները՝ գերազանցօրէն կրօնաւէր եղած են: Ինչպէս Մովսէս, Եսայի, Երեմիայ, Յիսուս Նազովրեցին ու Տարսուցի Պողոսը, Հնդկ կանտին ու Ամերիկացի Ուիլսոնը, Գր. Լուսաւորիչը, Սր. Սահակ և Մեսրոպը, Բաջն Լարդանը, Շնորհալին ու Նարեկացին...

Բողոքականը «ոչ-ազգաւէր» ու «կրօնքը» ազգակործան նկատողները՝ թէ՛ «ազգասիրութիւն»ը թէ՛ «կրօնք» և

թէ՛ անոնց փոխ-յարաբերութիւնը սխալ ըմբռնած են:

«Ազգ» բառը՝ կը նշանակէ միևնոյն ծագումը, բարքերը, օրէնքները, աւանդութիւնները և մանաւանդ միևնոյն իտէալները ունեցող և օովորաբար միևնոյն երկրը բնակող մարդոց: Ազգ մը՝ վերոյիշեալ յատկանիշները ունեցող անհատներու հաւաքականութիւնն է:

Արդ՝ անհատ մարդը՝ ազգին՝ ինչպէս համայն մարդկային ընկերութեան՝ հիմն է:

«Ազգասիրութիւն» բառը՝ բարդ և վերացական գոյական մըն է: «Ազգ» կոչուած հոգիները գոյութիւն չունին, որ սիրել կամ չսիրել խնդրոյ առարկայ ըլլայ: Մէկը՝ «հայ» կամ «ֆրանսացի» կոչուած ցեղին լեզուն, գրականութիւնը, երկիրը, հողն ու ջուրը, օրէնքները, աւանդութիւնները կրնայ սիրել, բայց ասիկա «ազգ» ինչ անպակաս յատկութիւնները ուրիշներէ վեր դասել է: «Ազգ»ը սիրել՝ «հայ»ը սիրել է: ու «հայ»ը՝ ես կը հասկնամ «հայ ան-

հասը», առանց որոյ ազգ չկայ: Ուրեմն ի՞նչ է իրական ազգասիրութիւնը:

Ոմանց կարծիքով մեծագոյն ազգասիրութիւնն է, կուսակցական ըլլալ և «Վրէժ» գոռալ:

Ասիկա առարած սրտի մխիթարութիւնն է ազգակործան ընթացք մըն է:

Եթէ ազգը անհատներէ կը բաղկանայ՝ ու ազգասիրութիւնը անհատը տիրելէ կախեալ է, ուրեմն ազգասիրութիւնն ալ՝ հայ անհասին անմիջական կարօտքիմէնէր, քաղաքացոյն շահերը հոգան է:

Տեղահան «հայրենազուրկ» թշուառ հայ անհատին անմիջական կարօտը ի՞նչ է արդեօք:

Շատ շատերու համար ատիկայ նիւթական է: Տաւն, գործ ու նամանաւանդ հայրենիք մը ապահովել: Այսպիսիներ տասերկու տարի «Ազգասիրութիւն» կը քարոզեն՝ բայց իրենց քթին տակը անգործ երիտասարդը, հիւժախաւոր օրիորդը, վշտակոծ աւանտէրայրին, անուս որբը կ'անտեսեն, կ'արհամարհեն, և նոյնիսկ կը կողոպտեն, անոնց լուծմանիւր կը շահագործեն, ի սէջ . . . ազգասիրութեան և հայրենասիրութեան:

Ուրիշ գասակարգի մը համար՝ մեր մեծագոյն կարօտը հոգեկան-քաղաքական է: Տունի, գործի, հայրենիքի կը կարօտինք: Բայց շատ անցի կը կարօտին մեր ունեցած տունը: գործը, հայրենիքը պահնչու և վայնչնչու արուեստին: «Պահելն աւելի զժուար է քան թէ շահիլը» ըստած է իբրաւամբ: Ոչ ոք կ'ուրանայ թէ ազատ հայրենիք, սեպհական տուն, յաջող գործ աւանդաւ ամեն մարդու՝ և հայ մարդու ալ՝ իրաւունքն է: Բայց անգամ մը որ տունդ, հայրենիքդ կորսնցուցած ես ու օտար հորիզոններու տակ հիւրընկալուած՝ բացարձակ ախալ է անմիջական պէտքերը՝ առթիւն, որբը, թաքախաւորը

մոռնալ, և միտք, գրամ, այժ վատնել հեռաւոր ապագային համար: Մեր կարծիքով՝ հայ ազգին անմիջական կարօտն է ազգային վերածնունդն մը. հոգեկան, կրօնաքաղաքական ազգատիր ծնունդն՝ մը, նկարագրի փոփոխութիւն մը:

Մենք պատմութենէն գաս չենք տորվիր: Թիւրքիոյ մէջ գործուած սխալները հիւրընկալ երկրի մը մէջ եւս կը գործենք: «Աչքի փուշ», «անբաղձալի տարբ» կը նկատուինք Սիւրիոյ, Յունաստանի և Ֆրանսայի մէջ: Քանզի փոխանակ տեղական հոգեբանութիւնն աւտուտնախրելու, վարքն ու բարքերը՝ ճանչնալու, լեզուն ու պատմութիւնը տեսնելու և իւրացնելու, բնիկ տարրին հետ բարեկամանալու ու անոնց վտաւհութիւնը շահելու, եկեղեցական, կուսակցական, ընտրական կռիւներով կը զբաղինք, վրէժ կը պոռանք. տեղացիներու և հոգատար պետութեան վէճերուն միջամուղի կ'ըլլանք, քէմիքու ու քաղաքներու մէջ եղբայրասպան կռիւներ կը մղենք: Ու ասանց մէջնը յանուն . . . ազգասիրութեան, հայրենասիրութեան և հայասիրութեան:

Արդիւնքը: Պատմութիւնը կրնայ կրկնուիլ, ինչպէս եղաւ Կիլիկիոյ գրաւման շրջանին:

Հայ ազգին, Հայ անհատներուն՝ անմիջական կարօտն է կենցաղագիտութեան տարրերը սորվիլ, Մարդոց հետ բարեկամանալ, երախտագիտութեան, վեհանձնութեան, շրջահայեցութեան առաքինութիւնները իւրացնել, հայ անհատը իր միջավայրին մէջ մարմնով առողջ և ողջ, հոգիով ազնիւ, նկարագրով անբասիր պահել. ուղղամիտ, հաւատարիմ, աշխատասէրս Աստուածալախ, հայ տիտաններ պատրաստել. ահաւասիկ մեր անյետաձգելի կարօտը: Ասոնցմով որեւէ ազգը «մեծ» կ'որակեն: (Շար.)

Յ. ԶԱԳՄԱԳԾԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ԿԵԱՆՔԸ

Ձկայ բան մը Թրաւ հետ այնքան մօտէն չփռւմ Թաննանք որքան կեանք կոչուած խորհրդաւոր հանելուկը: Կեանք ունինք, և մեզմէ իւրաքանչիւրը «կ'ապրինք» ըսելով հանդերձ կ'ընդունի թէ չկայ բան մը Թր այնքան խորհրդաւոր, անբացատրելի ըլլայ որքան կեանքի ընոյթն ու ակիզքը, և աւելի զարհուրելի և ահաւոր քան կեանքի վախճանը:

Ինչ է կեանքը...

Գոհացուցիչ և լման սահման մը կարելի չէ տալ անոր:

Երբ կեանքի վերլուծումն և սկզբնապատճառներուն բացատրութիւնը տալ կարելի չէ, կը բաւականանանք առայժմ սահման մը տալ անոր յատկութեանց մասին:

Կեանքի խիստ յատկանշանակաւոր յատկութիւններն են հետեւեալները:

1. Անոր նախահիւթը (protoplasm):
2. Օտար նիւթերը իւրացնելու և նոր գոյութիւններ վերարտադրելու կարողութիւնը: 3. Գրգիռները մտացի կերպով ընդունելու և անոնք պատասխանելու կարողութիւնը:

1. Որքան որ գիտենք, կեանքը՝ ամենաբարդ բաներէն մէկն է տիեզերքի մէջ: Անոր նախահիւթը թէ ոչ հարիւրաւոր գէթ շատ մը բաղադրեալ քիմիական նիւթերէ կը բաղկանայ: Այս նիւթերը խառնափնթոր կերպով գիշուած չեն, բնդհակառակը մասնաւոր օրէնքներով դասաւորուած են: Այս սիստեմներու պարզագոյն ձեւը, բջիջը, անկախ գոյութեան տէր է: Կենդանիները ու բոյսերը զանազան բջիջներով կազմուած են, կրկին անոնք խառն ի խառն կուտակուած չեն, այլ պարզէն ղէպի բաղադրեալ կազմակերպուած օրստեմներ են: այսինքն հիւտուածք,

գործարաններ, գործարան-սիստեմներ, անձ, գաղութ և նահանգներ: Կեանքի ամենախորհրդաւոր գաղտնիքներէն մէկըն է թէ ինչպէ՞ս այսքան բարդ սիստեմներ մէջտեղ եկան նախնական նախահիւթէն և արդեօք ի՞նչպէ՞ս:

2. Ուրիշ մէկ խորհրդաւոր կէտը այն է թէ կրնան իրենց գոյութիւնը տարիներ շարունակել, ուրիշ ստաւելութիւն մը այն է թէ մարդկային հետքած մեքենաներուն ոչ-նման, աճելու և մեծնալու յատկութիւններ ունին, մաշած և վնասուած մասերը վերանորոգելու կարողութիւն ունին, նոյնիսկ կրնան նոր մեքենաներ ստեղծել:

Մենք լաւ գիտենք թէ ապրող գոյութիւններ օտար նիւթեր ներս կ'առնեն, չէ թէ միայն որպէս ածախ վառելու, հապա աճումի և վերանորոգումի համար: Բայց մեր հասկնողութեան անդին կը մնայ, թէ ինչպէ՞ս իւրաքանչիւր բջիջ իրեն յատուկ սնունդը, նիւթը ներս կ'առնէ և իրեն առանձնապատուկ նախահիւթին կը վերածէ: Ահա կեանքի մեծ հանելուկը:

Նախահիւթը կ'սկսի մեծնալ անոր վրայ առելոցութեամբ, ըսյց քանի որ բնջիջները պէտք է փոքրիկ մնան, անոնք իրենց աճեցումի բարձրագոյն աստիճանին հասնելէ վերջ կը կիտուին, կը վերարտադրեն: Երբեմն բջիջն երբևէ խուճեր, գործարան և նոյն իսկ ամբողջ մարմինը կիտուելով կը վերարտադրուին նոր բոյսեր և կենդանիներ: Բայց վերարտադրութեան ամենաբարդ և խորհրդաւոր ձեւն է սա, թէ հաւկիթը կամ բեղմնափոշին՝ որոնք մէկ հատ բջիջէ կը բաղկանան՝ աճելով կ'ըլլան բոյս կամ կենդանի մը:

Ո՞վ չի գիտեր թէ այս այսպէս է. — Բայց ի՞նչ կայ ասկէ աւելի խորհրդա-

և որ աշխարհի վրայ: Այն ճշմարտութիւնը թէ գնդասեղի զլուխի մը ծաւալով փոքրիկ բլիշ մը, մեծնալով կը բռնայ ըլլալ մարդ մը, իրեն յատուկ բոլոր կարողութիւններով, ասիկայ հրաշալիքներու բարձրակէտն է:

3. Բոլոր բոյսեր և կենդանիներ, մէկ կամ աւելի բլիշներէ բաղկացած, կը տարբերին իրարմէ գիւրազգացութեան մասին գրգռումներու դէմ: Ասոնք կրնանք կոչուի հաճելի և ոչ-հաճելի: Ընդհանուր առմամբ ասոնք կը ձգտին դէպ ի առաջինը, հաճելին, և կը հեռանան ոչ-հաճելիէն: Ասոնք կը շարժին դէպի սննունդ, ջուր և թթուածին, ու կը փախչին չափազանց տաք ցուրտ կամ փնասակար ազդակներէ:

Փորձելով, իսկ երբեմն ալ սխալելով վերջ ապէս կը յաջողինք: Բարձրագոյն աստիճանի կենդանիներ և մաքրկային արարածներ կը սորվին ընել հաճելի բաներ, փորձելով և սխալելով նոյնիսկ կատուներ ինքզինքնին փակուած վանդակին մէջէն կ'ազատեն՝ կոճակը դարձնելով: Ձիեր դռներ կը բանան, իսկ մարդիկ կը սորվին ընել նպատակաւոր գործեր:

Բոլոր կենդանի գոյութիւններու մէջ կը գտնուին տարբերական զգացողութիւն, օգտակար յատկութիւններ և բարձր կարողութիւն: Բարձր կենդանիներու սերմնաբլիշներուն մէջ կը գտնուին և կը կազմուին հոգեբանական տարրերը, որոնցմէ կը ծնին՝ ունակութիւն, առանձնայատուկ զգացողւմներ, տաղանդ և իմացականութիւն:

Ոչինչ կայ աւելի հրաշալի այս աշխարհի վրայ, քան մարդկային մարմինն և միտքին զարգացումը այդ անտեսանելի սերմնաբլիշին: Կեանքի բոցը որ ցեղէ ցեղ դարեւրէ ի վեր վառ պահուած է, ուշ կամ կանուխ ամէն մարդու մէջ վերջապէս կը մարի: Բաղադրեալ նախահիւթը կը կազմալուծուի, այդ

կենդանի, զգայուն, կեանքով լեցուն յօրինուածքը կը դառնայ անկենդան, անզգայ, անշարժ:

Հոս է ամենամեծ գազանիքը՝ կեանք և մահ:

(ՏՈՒԹ.) Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

Տէր Քեզի ԿՈՒԳԱՄ

Սեւ խաւարի, ցաւ աւ վշտի մէջ
Կենսատու լոյս մը արտիս
Կարծես պիտ' աւետէ սիրտունջ
Թէ Տէր Յիսուս կ'ուզէ զիս:

Խաղաղութեան, Սիրոյ, փառքի մէջ
Երկնային իր պալատէն,
Յիսուս կը դիտէ յոյսով մ'անվերջ
Որ չուտով երթամ իրեն:

Տէրը բազմած փառապանծ գահին,
Անհամբեր կ'ապասէ Ան.
Գրուած անուն մը ունի Ձեռքին,
Միթէ կրնա՞յ մոռնալ զայն:

Բարի Հովիւս ինծի առաջնորդ
Ցաւերուս մէջ ամենի:
Կ'առաջնորդէ վայրեր սիրայորդ
Անվիշտ ափերն Սիոնի:

Երկնից երգերէն տակաւ անուշ
Իր սրբազան ականջին
Կը հնչեն խաղերն մեղմ ու քնքուշ
Իմ վհատ, տկար կանչին...

— «Տէ՛ր, Քեզի կուգամ,
Հիմա զիս լուս
Մաքրէ Սուրբ արիւնով
Յեղեալ ի Գողգոթա»

Կիլիկիոյ Թ.

25 Յուլիս 1932

Սանատրիուս
Հառնանա

ԱՐՏԱՍՈՒՔԸ...

Վշտի ովկիանին մեջ անյոյս սիրսն վիրակոծ,
Ունի իր խորքին մեջ ժահրոս փրփուրներ աշեկոծ.
Ինչո՞ւ թողու յար իր մեջ այդ մոլուցիչ սեւական,
Վրդովելու խաղաղ կեանքին վառ խիւղն հոգեկան:

Արսասուրբ... զոյգ աչերէ կաթող շիթերն քաց,
Որ կը հոսին վար այս լոյս ծորակներէն կիսաքաց,
Թէեւ կ'ընեն աչերն աղօ՝ դեմք լալակոծ,
Բայց կաշին կը սանին ւրտի քախիծն քազմահոծ:

Արսասուրբ... սիրոյ, կարօտի, զղջման յորդանաս,
Բաւ է փոխելու, շրջելու կեանքերն յուսահաս,
Բայց, ո՞հ թէ երբ ւրտի մ'արսասուրբն է ցամբած,
Կ'այրի, կը մրկի նա յաւէս իր սաղմին մեջ խանձած:

Արցունքներ կան ծակող անցնող խար ւրտեր գերթ սարափ,
Արցունքներ աշ կան որ ո՛չ ոյժ ունին եւ ո՛չ ալ քափ,
Արսասուրբ... կոկորդիլոսի, կեղծաւոր մարդուն,
Չունի հմայքն իսկ արցունքին լալակոծ տղուն:

Սուրբ Բաղասին այդ մեղսաքաքաւ կեանքէն յոյժ սանջուած,
Իր հոգւոյն խորքէն զարեցաւ, լացաւ Որդին Աստուած.
Արսասուրբ... ո՞հ այդ սուրբ շիթերն՝ սուրբ էակին,
Չէ հանգոյն մարդուն՝ ոչ ալ արցունքին լացող լուսնին:

Որդեկորոյս մայրը խելազար նայուածօրով ապուշ,
Վաղուց սառած իր ւրտին մեջ մօր մը սերն ուշուշ,
Ոչինչ ունէր մորմոխելու իր վիշտերն անհուն,
Թէ արսասուրբ... չողողէր իր սիրսն տրոփուն:

Արսասուրբ... որ ծով մը կազմեր է ւրտի խորքին,
Կ'ունի, կը փրփրի աղի արցունքներով լալագին,
Բայց չէ ան կոսսանքն ոչ վշտիս եւ ոչ ալ ցաւիս,
Այլ՝ արսասուրբ... դարաւոր գերի իմ Հայ ազգիս:

Աստուած իմ, հերի՛ք լացիմք այսօր սարի ազգովին,
Խնդրեմ արքէ յորցուր մեր արսասուրբ... բոյորին.
Թո՛ղ մարդկութիւն հերի՛ք լայ մեղքի ովկիանին մեջ վէս,
Տաճուկ աչեր, լացող ւրտեր քու մեջ չորնան յաւէս:

Բէսապ-Բէօրիւնէ

Ա. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՄԵՐԻԿԱՅԻ Այսպէս նահանգին մէջ 60 ոտք բարձրութեամբ ծառ մը հողով միասին մէկ քառորդ մղոն իր գտնուած տեղէն հեռու ուրիշ տեղ մը փոխադրուած է: Ամբողջ գտնուածը 150 թօնօ կը կշռէր: Ըղերու վրայ 20էն 40 մարդ մի քանի ամիս աշխատած են ասոր համար: Ծառին արմատները խոշոր և հսկայ գունդի մը մէջ զետեղուած և ասիկա իր կարգին հաստատ մնալու համար իր բոլորտիքը 32 ոտք տրամագծով չօրս ոտք բարձրութեամբ չընկած մը շինուած է: 64 լողեր անօր փոխադրութեան համար գործածուած են: Ծառը իր նոր տեղանոյն մէջ օկած է աճիլ և բողբոջիլ իր առաջնայն գտնուած վայրին մէջ եղածին պէս:

ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐՈՒՆ յատակը բուսական և կենդանական կեանքը ուսումնասիրելու և այնտեղի սքանչելի տեսարանները դիտելու համար սուգող խոշոր գանգակ մը կը գործածուի, որով չորս մարդ միենոյն տան կրնան ծովուն յատակը իջնել: Այս գործիքը նաեւ մը միացած է և կրնայ 60 ժամ ջուրին տակը մնալ շնորհիւ թթուածին պարունակող ամբարներու և օդը մաքրող գործիքներու: Գիշեր ժամանակ շատ մը վթառոր լոյսեր ովկիանոսին յատակը կը լուսաւորեն որպէսզի քննիչները օխրալի տեսարանը դիտելէն չզրկուին:

ԱՊԱԳԱՅ ԻՆՔՆԱՇՍԻԺԸ

Ինչ տեսակ ինքնաշարժներ պիտի կառուցուին արդեօք ապագային: Ոմանք կրնան ըսել թէ անոնք օդանաւի արագութեամբ պիտի սաւառնին, սակայն անոր պէս թեւեր պիտի չունենան: Վաղուան ինքնաշարժը փոխադրութեան համար ա՛լ աւելի յարմար, ապահով և քթանչելի կերպով կառու-

ցուած պիտի ըլլայ և հիմակուան գործածուածներէն՝ բոլորովին տարբեր:

Այս ինքնաշարժին կիրարկման համար ներկայ մեքենավարները իրենց քշելու եղանակը փոխելու են, նմանապէս մէկդի ձգելու են իրենց հին ձեռով կառուցած ինքնաշարժները:

Ապագայ ինքնաշարժ կառքը սա յատկութիւններով օժտուած պիտի ըլլայ:

1. Շարժիլ սկսելէ 10 երկվայրկեան վերջը արագութիւնը—ժամը 60 մղոն:

2. Իւրաքանչիւր մղոնի համար ներկայիս գործածուած կապուիւնի կէսը պիտի գործածուի:

3. Ամառը մասնաւոր հովանաբութիւն և ձմեռը յատուկ ջերմութիւն արտադրելու միջոցներ պիտի կիրառուեն:

4. Մեքենայի ծանրութիւնը իւրաքանչիւր ձեռնոյթի գլուխ երկու հոգայէն պակաս (հինգ փառնա) պիտի ըլլայ: Ընդհանուր ծանրութիւնը 1000 (փառնաէն) կամ 360 հոգայէն պակաս պիտի ըլլայ:

5. Հիմակուայ ինքնաշարժներու կէս զինին չափ պիտի արժէ:

Վաղուան օթոն օդանաւի, թռչունի և կամ ձուկի ձեւով պիտի ըլլայ, կըրիային ձեւը պիտի ունենայ: Այս կազմութեամբ շինուած ինքնաշարժներ իրենց ծանրութեան տասնապատիկը բեռ պիտի կրնան տանիլ: Զուներնք այնպիսի մեքենայ մը որ իւր ծանրութեան տասնապատիկը բեռ կրէ:

ՏԵՍԱԿ Մը մատիտ շինուեցաւ Ամերիկայի մէջ որ իբր ծայրը թէ՛ շեղը մը և թէ եղունգ կտրելիք զմելի մը կը պարտենակէ:

ԸՍՏ ՎԵՐՋԵՐՍ կատարուած վիճակագրութեան Ամերիկայի մէջ 4,000,000 երեկտրական ժամացոյցներ կը գտնուին:

Հին ԵԳԻՊՏԱՅԻՆԵՐՈՒ առողջական վիճակը կարելի է ճշգրիտ հասկնալ Գ.

Ճառագայթներու միջոցաւ առնուած մոմիաներու պատկերներով: Յաճախ այս մոմիաները դադաղներու մէջ կ'ըլլան և թանգարանի մէջ ցուցադրութեան ատեն մարդիկ զանոնք կը քըննեն, սակայն միայն դադաղն է որ կը տեսնեն: Թէ՛ դադաղը և թէ՛ մոմիան դիւրաբեկ են արդ՝ անկարելի է ի բաց առեալ Բ. Ճառագայթներէն ուրիշ միջոցով պանսնք քննել: Մոմիային դադաղը Բ. Ճառագայթի տախտակին վրայ դրուելով ճառագայթներու կ'ենթարկուին: Այս կերպով բոլոր մոմիայի մասերը կը նկարուին առանց դադաղը բանալու: Այս գործողութիւնը ընդհանրապէս թանգարանի մէջ կը կատարուի: Այս հետազոտութիւնները ցոյց կուտան թէ՛ ներկայ դարուս հիւանդութիւններէն ժամնք հին ատեն գոյութիւն ունէին նգիպտացոնց մէջ: ԲԻՄԻԱԿԱՆ խառնուրդ մը կը պատրաստուի Ամերիկայի մէջ որ թէ՛ մարդոց և թէ՛ ընտանի կենդանիներու համար թունաւոր չէ, սակայն միջատներուն համար թոյն մըն է: Այս խառնուրդը երբ բանջարեղէնի և պտուղների վրայ դրուի զանոնք անեղծ կը պահէ, ինչու որ միջատները անոնց չեն կրնար մօտենալ իր թունաւորիչ յատկութեանց համար: Երբ արեւուն առջև պարզուի այս քիմիական խառնուրդը իր միջատասպան յատկութիւնները կը կորսնցնէ և դեղին գոյն մը կը ստանայ: Նոր փորձեր կը կատարուին այս կորուստին առաջը առնելու համար:

ՓԱՐԻՋԻ մէջ խօսող ժամացոյց մը շինուած է որ հեռաձայնով ուղիղ ժամանակը կը յայտնէ: Ասիկա ինքնաբերաբար կ'աշխատի առանց գործարկուի (operator): Ժամացոյցը ֆիւլմի մը հետ կը գործածուի, որուն վրայ օրուայ ամէն վայրկեանները կը նշանակուին ձայնով արտադրուելու համար:

Այսպէս այս ժամացոյցին բաժանորդները տէ՛ ատեն իրենց ժամանակը կըրնան ճշգրիտ գիտնալ: Փարիզի նշանաւոր դիտարանի ժամացոյցներէն մէկուն համեմատ միշտ կը լարուի և հեղինակութեամբ կը խօսի:

ԼՈՍ ԱՆԿԵԼԵՍԻ մէջ փոքր հրդեհները մարելու համար կը զործածուի ուժգին հով արտադրող մեքենայ մը:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՄԵՄԸ ԲՐԻՏԱՆԻՈՅ տնտեսական վիճակը բարեփոխման չէ կրած. արտածուելը կը շարունակէ նուազիլ, իսկ Օգոստոսի վերջը անգործներու թիւը բարձրացած է 3 միլիոն 11 հազարի:

ԱԶԳԵՐՈՒ Դաշնակցութեան մասնակցող 57 պետութիւններէն 24 ը թերացած են Լիկայի տարեկան ծախքերուն իրենց տարեկան բաժինը վճարելու, տնտեսական ապահովի պատճառաւ:

ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ այս տարի մարդ զըլուխ 11 նամակ կամ փոստ քարտ տրուած է, երկրորդ հնգամեայ ծրարին համեմատ 1937 ին այս թիւը պիտի բարձրանայ 48ի: Թերթերու և հանդէսներու օրինակներու թիւը մարդ զըլուխ 39 էն 244 ի պիտի բարձրանայ: Հեռագրի և հեռախօսի հազորդակցութիւնն եւս նոյն համեմատութեամբ պիտի աւելնայ:

ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ ծախսուած իւրաքանչիւր ոսկիին 12 շիլինը կը տրուի անցեալ, ներկայ և ապագայ պատերազմներու համար. և 8 շիլինը ընտանիքը ապրեցնելու համար:

ՖԷՏԷՐԷԼ ԶԱՐԲ ՊՈՐՏԻ կողմէ, Մ. Նահանգաց մէջ, 40 միլիոն պուլը ցորեն նպաստ տրուած է աւելի քան երեք միլիոն ընտանիքներու: Կարմիր խաչի գաշտոնեաները յայտնած են որ

40 միլիոն, պուշլը հաւ եթէ բաշխուի աշ-
նան և ձմեռուան բոլոր պէտքերը գոհա-
ցած պիտի ըլլան: Այս յայտնութիւնը
զարմանքով լսուած է:

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԳՈՆՏԵՐՈՒ ԽՈՒՄ-
ՆԻՆ հազար միլիոն տօլարէն ստացած
են:

Դրամատունները՝ 643 միլիոն տո-
լար, որուն 80 միլիոնը Մր. Տօզի անպ-
հական զբաժատուներ: Մր. Տօզ վերա-
շինութեան ընկերութեան նախագահն
եղած է:

Երկաթուղիները՝ 214 միլիոն տօլար:
Մորթկիցճի գրութեամբ փոխատու-
ութիւն ընող ընկերութիւնները՝ 74 մի-
լիոն տօլար:

Ապահովագրութեան ընկերութիւն-
ները՝ 63 միլիոն տօլար:

Երեսութեան և փոխատուութեան ըն-
կերակցութիւնները՝ 52 միլիոն տօլար:

Անգործ բանուորները՝ ոչ մէկ սէնթ:

ԲՈՂՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ գործակցա-
կան (գօ—օփերաթիվ) ընկերութեանց
մասնակցողներու թիւը 70 միլիոն է:

ՎԵՐՋԻՆ ԵՐԵՎ տարիներու միջոցին,
Մ. Նահանգաց մէջ, աշխատանքի վարձ-
քը հարիւրին 27.3 նուազած է, իսկ
ապրուստի գինը՝ հարիւրին 22.8:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԹՂԹԱԿԻՑ ՄԸ ԿԸ ԳՐԷ:

Շատ մը քաղաքներու մէջ, բոլոր
աշխարհի վրայ, անօթութիւն կայ: Ու-
րիշ տեղեր տառապոյտներ կայ, զոր հրա-
պարակ չեն հաներ, քանզի դրամ չի բե-
րեր: Նաւահանգիստներու մէջ նաւերը
անգործ կը մնան: Մ. Նահանգաց 250
հազար մղոն երկաթուղիի գիծերը այս
տարի Սեպ.ի վերջին շաբթուան մէջ
անցեալ տարուան նոյն շաբթուան մէջ
գործածածէն 231, 195 կառք պակս
գործածած են: Իսկ Պրագիլ վեց միլիոն
տոպրակ խահուէն ծովը թափած է:
Ու ապա կ'աւելցնէ, «Անօթութիւն կայ,
օնուէնդ կայ, փոխադրութեան միջոց-
ներ կան: Միայն կը պակսի խելք»:

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՊԵՐՈՒԹԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆԸ.—

Հաստատութեան նոր հոգաբար-
ձութիւնը Սեպտեմբերի վերջը իբ ժո-
ղովը ունեցած է Պէյրութ և նոր միաց-
եալ դպրոցին մասին կարգ մը կարեւոր
որոշումներ տուած է:

Հաստատութիւնս պիտի կոչուի Մեյ-
ճաւոր Արեւելքի Աստուածաբանական
Ճեմարանը:

Նախագահը պիտի ըլլայ Մր. Կրի-
սէյտ, իսկ Բրոք. Յ. Լիւնեան նշա-
նակուած է փոխնախագահ:

Երեսուն երկու աշակերտներ արձա-
նագրուած են, որոնք կը ներկայացնեն
հետեւեալ երկիրները.— Սուրիա, Յու-
նաստան, Պուլկարիա, Թուրքիա, Պա-
ղեստին, Եգիպտոս, Անգրիստրալան,
Իրաք և Պարսկաստան:

ՀՕՏ ԿԱՅ ՀՈՎԻԻ ԶԿԱՅ

Թիւրքիոյ և Սիւրիոյ միջև եղած
սահմանին կից մեծ գիւղ մըն է Ազէզ,
որ այժմ Հալէպին կը պատկանի: Ունի
1200 ընտանիքներ որոնց 300ը Հայ է:
Տասը ընտանիքնոց Աւետարանական
համայնք մըն ալ կայ որ մասամբ ազ-
գականական կապերով իբ միութիւնը
պահած է:

Ուրախալի է որ հոս անոյ քանի մը
ընտանիքներ Մայր Եկեղեցիին հետ փո-
խադարձ սիրով կը գործակցին, մեծա-
պէս օգտուելով անոնց եկեղեցիէն և
դպրոցէն որոնք լաւ գործունէութիւն
ունին:

Ազէզ չունի Աւետարանական ծոցո-
վարան մը և հոգեւոր պաշտօնեայ: Ս-
տին մը կատարուող պաշտամունքներն
ալ վերջերս դադարեալ էին: Ներկայիս
առ ժամանակեայ գործունէութիւն մը
սկսած է: Նախկին Աթէնքի Կրօնից

Վարժարանի ուսանողներէն մին ամառնային արձակուրդի առթիւ հոս զրկուած է հոգեւոր գործի համար: Հիւրընկալ Պետոյեան ընտանիքի երկու խոշոր սենեակներուն մէջ կիրաւնօրեայ պաշտամունքներ կը կատարուին: Յիսուսի շուրջ չափահասներ և քսանհինգի շուրջ մանուկներ (կիրաւնօրեայ դպրոցի համար) սիրով կը յաճախեն հոն: Այս թիւերը կը պարունակեն օղափոխութեան համար Հալէպէն Ազէզ եկած Աւետարանական ընտանիքներ ինչպէս նաև Հալէպցի արաբախօս (թրքերէն ալ գիտցող) քանի մը Աւետարանականներ: Տեղացիները մեծապէս կը հրճուին այս գործակցութենէն և ամառնային այս պատեհութենէն: Առաւելոյ խօսքին համար զգալի կարօտ մը կայ: Մասնաւոր ժողովարանի մը պակասը մեզ դժուարութեան մատնեց, հակառակ անոր որ վերայիչեալ ընտանիքը չափազանց հիւրասէր և զոհող գտնուեցաւ: Ազիզ, Սեպտ. 22. Ս. Գ. ՍԻԻԼԱՀԱՆ

ՊԷՅՐՈՒԹԻ ԱԻԵՏ. ԿԵԱՆՔԷՆ

Ներկայիս եկեղեցիներն աւելի քան երեսունը ամենէն շատ զբաղեցնողն ու մտահոգողը արդի երիտասարդութիւնն է:

Եկեղեցին երիտասարդներուն տիրելի ընծայելու և անոնց մէջ հոգեւոր շարժում յառաջ բերելու համար Օգոստոսի վերջերը Սուրբ Էլ Ղարպի մէջ (լիւնային Լիբանան) միջազգային կըրօնական համաժողով մը գումարուեցաւ, որուն ներկայ գտնուած են նաև 80 հայ երիտասարդներ:

Կարժէ որ, մեր եկեղեցիները լրջօրէն խորհին և մինչև հիմա եղածներէն աւելի գործնական միջոցներու ձեռնարկին երկսեռ երիտասարդներու մէջ հոգեւոր շարժում յառաջ բերելու համար:

Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ հովիւ

Վեր. Ե. Կէօքկէօղեան մէկ ամիս արձակուրդով Քէսապ մեկնեցաւ իր ընտանիքով: Բայց արքայն ուրախալի է դիտել որ, նա հոն ալ կ'աշխատի:

Հայ Աւետ. Ա. Եկեղեցիին մէջ Սեպտ. 11, կիրակի առաւօտ խօսեցաւ Միսթըր Դրոզ. Նիւթն էր. Աւետարանը ամօթ չեմ օնպերս թարգմանի պաշտօնը կատարեց Տիար Տ. Խնդրուի: Յաջորդ կիրակի խօսեցաւ վերջինս. Նիւթն էր. Վէր: Իսկ Հոկտ. 2, կիրակի առաւօտ ժամը 9ին խօսեցաւ իբր հիւր քաղաքս գտնուող Վեր. Կ. Յարութիւնեան Նիւթն էր. ՎՄէն մեղք և հայհոյութիւն պիտի ներուի մարդոց, բայց Հոգւոյն դէմ եղած հայհոյութիւնը պիտի չ'ներուի:

2 Հոկտ. Պէյրուք

ԿԱՅԾ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻՆ ՀԱՆԴԷՍԸ ԶԱՀԼԷԻ ՄԷՋ

Զահլէի կիրաւնօրեայ դպրոցին, բարի պտուղը տեսանք այն գեղեցիկ հանդէսին մէջ՝ որ տեղի ունեցաւ Սեպտ. 25, կէսօրէ ետք ժամը 3.30ին, ժողովարանին մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեան:

Հանդէսը սկսաւ երգով մը. օրուան նախագահ Պատ. Յ. Արզարեանի աղօթքէն վերջը արտասանուեցան յստակ առողջանութեամբ շարք մը Սաղմոսներ և համարներ. մէջ ընդ մէջ երգուեցան երգեր: Յետոյ ներկայացուեցաւ յաջողութեամբ երկու արամաներ «Բարի Սամարացիին» և «Տասը Կոյսերը», աւելինդանի պատկեր մը, «Հինգ ցեղերը» Աստուծոյ ղրկուած ալ գերազանցապէս տրամադրիչ և գնահատութեան արժանի էին: Տարազները լաւ յարմարեցուած էին և դերակատարները բաւական յաջող:

«Բարի Սամարացի»-ին մէջ անարդարութիւն, եսամոլութիւն, անձնութեան թիւն, և բարեգործութիւն ներկայացուցան տիպար օրինակներով:

«Տասը կայսեր»-ը երգախառն էր, որ հմայեց և յուզեց հանդիսականները: Անոր մէջ կը պատկերանայ յաւիտենականութեան խորհուրդը և վարձքը բարին ու չարին: Անցաւ շատ յաջող, ձգեց խոր ազդեցութիւն և շատեր լաւին երբ կ'երգուէր վերջին երգը:

Իսկ «Շինգ Յեղեր»-ը կենդանի պատկերը բնական և հաճելի էր. կը բիւրեղացնէր սա մեծ ճշմարտութիւնը թէ չկայ գոյնի կամ ցեղի խտրութիւն Յիսուսի առջեւ:

Այս փայլուն հանդէսը, կազմակերպուած և այսքան ներկայանալիօրէն պատրաստուած էր կիրակնօրեայ դպրոցի աւուելցողներէն Օրք. Ա. Կէօն-ճեանի և Զ. Տատուրեանի կողմէ:

Զահիկ Մ. Ն.

ԴԱՄԱՍԿՈՍԻ Աւետ. Եկեղեցիէն կը գրէ մեր թղթակիցը.

Դամասկոսի Հայ Աւետ. Եկեղեցիին համար յիշատակելի գիշեր մը եղաւ, Ո-

գոս. 30, 1932, երեքշաբթի գիշերը: Վեր. Ն. Սարեան Հալէպի Բեթէլ Հայ Աւետ. Եկեղեցիին հրաւէրը ընդունած ըլլալով մօտ օրէն քաղաքէն պիտի մեկնէր ընտանեօք: Անցեալ գիշեր, արդէն, Եկեղեցիի Հոգաբարձութեան կողմէ Վեր. Սարեանի և իր ազնիւ տիկնոջ ի պատիւ ճաշասեղան մը տրուած էր դպրոցի շէնքին բակը: Այս գիշեր ալ նոյնտեղը հրաժեշտի երեկոյթ մը կատարուեցաւ, մասնակցութեամբ Եկեղեցիի ժողովուրդէն շատ մը անհատներու և մասնաւոր հիւրերու: Վեր. Եղիա Քասուհի, Եկեղեցիի նոր հովիւը, որ շարաթ մ'առաջ քաղաքս հասած էր, կը վարէր յայտագիրը: Միքանի երգերու խանդով երգեցողութենէն ետքը կարգաց ՃիԱ Սաղմոսը և աղօթեց: Ապա Տիար Թ. Գառարճըգեան, հոգաբարձութեան ատենագիրը, գրութիւն մը կարգաց որով Վեր. Ն. Սարեանի իննամեայ գործունէութիւնը կը գծէր գնահատական ոգիով. ամփոփումը սա է.—

«Վեր. Ն. Սարեան 1923, Հոկտ. 1 ին մեղի ղրկուեցաւ քարոզչի հանգամանքով, և տարի մը մեր մէջ գործելէ ետքը 1924 Նոյ. 16 ին հովիւ ձեռնադրուե-

(Շարունակուած էջ 342 հէ)

ղուել ծռնել: Մեր կարծիքով ահա այս է գործնական բարոյական հարցը, որ այսօր քրիստոնէական աշխարհը խորհիլ կուտայ և կը շուարեցնէ: Անշուշտ այս նոր հարց մը չէ, Առաքեալներու դարէն ի վեր ան իր գոյութիւնը կը պահէ: Բայց ոչ մէկ ատին ներկայ դարուս մէջ եղածին չափ, մանաւանդ պատերազմէ ետքը, սուր, մեծածաւալ և վտանգաւոր հանգամանք չէ ունեցած: Վերջին տընտեսական տագնապը զայն դարուս մեծագոյն հարցերուն շարքին մէջ դասած է:

Մենք անոնցմէ չենք որ կը խորհին թէ այս հարցը լուծել կարելի չէ կամ կարելի պիտի չըլլայ: Բայց անկարող

ենք որոշել թէ ինչ է այն կերպը որով զայն գոհացուցիչ կերպով լուծել կարելի է: Սա մէկ բանին վստահ ենք թէ Յիսուսի վարդապետած բարոյական սկզբունքները վերջապէս և կատարեալ կերպով պիտի յաղթանակեն: Սակայն միայն Աստուած գիտէ թէ այս յաղթանակը ինչպէ՞ս, ե՞րբ, քանի՞ տարի, քանի՞ հարիւր կամ հազար տարի ետքը պիտի իրականանայ: Մեր բաժինը միայն սա է. մեր կարելին ընել, մեր կեանքովը, հաւատքովը, ծառայութեամբը աշխատիլ յաղթութեան այն օրը մօտեցնելու համար:

Սեպտեմբեր 1932

Զ. Ա. Պէճճեան

ցաւ եկեղեցիի փափագին վրայ և Պէյրու-
թի Շրջանին Վարչութեան որոշումով:
Մեր մէջ իր իննամեայ անընդհատ եռան-
դով և սիրալիր գործունէութիւնը շատ
արգիւնաւոր եղած է եկեղեցիի և ժողո-
վուրդին հոգեւոր կեանքին տեսակէտէն:
Դամասկոսի արիւնալի դէպքերուն մի-
ջոցին մինչ ուրիշներ քաղաքէն կը հե-
ռանային ինքը չէ ուղած հտեւը մնացող
ժողովուրդէն բաժնուիլ և յաջողած է
գոծուարութիւններով լի տարիներու մէ-
ջէն թէ՛ բեմը և թէ՛ դպրոցը առանց
պարտքի անցնել և դատած է թէ՛ հիւանդ-
երու թէ՛ կարօտներու համար ալ օգնու-
թեան և մխիթարութեան միջոցներ:
Իսկ Տիկ. Նուրիցա Սարեան կըրցած է հո-
գեւոր խանդ և տաք միջոցորտ մը ստեղ-
ծել կիներու մէջ: Հիմա մեզի համար
թէպէտ շատ դժուար է անհնգմէ բաժնե-
ութիւն, բայց չենք ալ փափագիր Աստուծոյ
առաջնորդութեան և Կարգադրութեան
հակառակ երթալ, և կ'ողջութենք Աստու-
ծոյ որ Վեր. և Տիկ. Սարեան օգտակար և
օրհնարիւր ըլլան նաեւ իրենց նոր ելթա-
լիք եկեղեցիին: Միւսինքն ասին կը
խնդրենք Աստուծոյ որ մեր նոր հովիւն
ալ սեր եկեղեցիին և ժողովուրդին հա-
մար օգտակար և շատ մը հաջողութե-
քով լինի միջոց դառնայ:

Ապա Տիար Մ. Կովկասեան, եկեղե-
ցիի Հոգաբարձութեան մէկ անդամը,
գեղեցիկ վկայութիւն մ'ըբաւ իր հոգեւոր
կեանքին մասին, յայտնելով թէ իր հո-
գեւոր կեանքը կը պարտի Վեր. Ն. Սար-
եանի զոր ստիպուած է իր հոգեւոր հայ-
րը կոչելու:

Բարեարատեհ պարագայ մըն էր մեր
մէջ ներկայութիւնը Վեր. Հէնրի Իիկզի,
որ խօսք առնելով յայտնեց թէ Հալէպի
Բեթէլ եկեղեցիին մէջ Վեր. Սարեանի
նման մէկու մը անհրաժեշտ պէտքը ըզ-

գացուած էր, և թէ ինք ուրախ էր որ
Դամասկոսի եկեղեցիին և Վեր. Սարեան
անձնուէր գտնուեցան այս պէտքը գոհա-
ցնելու Բէթէլի մէջ, ուր՝ իր գործի նոր
գաշտին մէջ՝ Վեր. Սարեան առիթը պիտի
ունենայ աւելի ընդարձակ գործունէու-
թիւն և օգտակարութիւն ցուցնելու, և
թէ վերջապէս Դամասկոսի եկեղեցին ալ
իր բաժնուող սիրելի հովիւին յարմար
յաջորդ մը գտած ըլլալուն համար շնոր-
հաւորելի է:

Ապա Վեր. Ե. Բասունի միջանի բա-
ռերով իր շնորհակալութիւնը յայտնեց
թէ՛ Վեր. Ն. Սարեանի և թէ՛ Դամասկոսի
եկեղեցիին քոյրերուն և եղբայրներուն
կողմէ գտած համակրութեան և սիրալիր
ընդունելութեան համար:

Ամէնէն վերջը Վեր. և Տիկ. Սարեան
յուզուած շեշտերով խօսեցան, և իրենց
հաճոյքը յայտնեցին այս անցեալ ինը
տարիներու միջոցին իրենց գտած գնա-
հատումին համար որուն անարժան կը
նկատեն իրենք զիրենք, և աւելցուցին
թէ կը յուսան և կը մաղթեն որ եկեղե-
ցին մինչեւ հիմա եղածին պէս և անկէ
աւելի հոգեւոր կեանքի և եղբայրական
սիրոյ մէջ հաստատ պիտի մնայ: Այս
խօսքերը ներկաներուն սիրտերուն կը
թափանցէին:

Երգով մը և Մր. Բիկզի աղօթքովը
կրեկոյթը վերջ գտաւ:

ԿիՊՐՈՍԻ Հայ Աւետ. եկեղեցիի ան-
դամներէն Տոքթ. Սամուէլ Մուրատեան
անձնական գործով մը քաղաքս եկած է,
և Հոկտ. 16 Կիրակի կէսօրէ ետքը քա-
րողած է Էմմանուէլ Հայ Աւետ. եկեղե-
ցիի մէջ:

ՊԱՏ. ԱՐԱՄ ՀԱՏԻՏԵԱՆ քաղաքէս
Քէսապ մեկնեցաւ Հոկ. 1 սկիզբէն սկսեալ
էքիզ-Օլուգ և Քէօքքիւնէ եկեղեցիներուն
հովուական պաշտօնը ստանձնելու համար: